

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑԸ ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ*

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Չարենց, Չոպանյան, Մակինցյան, «Անահիտ» հանդես, «Ապագա» չաբաթաթերթ, Փարիզ, Նաֆակ, հոգված, Երևան, գնահատում:

Ամփոփում

Արշակ Չոպանյանն իր հիմնադրած «Անահիտ» հանդեսի, ինչպես նաև «Ապագա» չաբաթաթերթի էջերում ուշադիր էր եղիչ Չարենցի անվան ու գործի հանդես: Դա գրական-քննադատական հոգվածների վերածվեց, երբ ծանոթացավ Չարենցի «Երկերի ժողովածու»-ին (2 հատորով, Մոսկվա, 1922) և «Պոեմներ»-ին (Կ. Պոլիս, 1923): Հաջորդեցին նաև մյուս հրատարակությունները՝ «Էպիգրամական լուսաբաց» (Երևան, 1930), «Երկեր» (Երևան, 1932) և «Գիրք ճանապարհի» (Երևան, 1933/1934): Չոպանյանը Չարենցին գնահատում էր որպես մեծ գրողի և նրա ստեղծագործությունը համարում համազգային նշանակության հոգևոր արժեք:

1932 թ. նոյեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություններին մասնակցելու հրավերով, որպես Լիոն քաղաքի պատգամավոր, Ա. Չոպանյանը մեկ ամսով գտնվել է Երևանում: Այս ընթացքում հանդիպել է Չարենցին, քննարկել են տարբեր հարցեր, իսկ «Հայաստան» հրատարակչությունում, որի գեղարվեստական գրականության բաժնի վարիչը ինքը՝ Չարենցն էր, տնօրեն էրվարդ Չոփուրյանի հետ կնքել են պայմանագիր՝ վերահրատարակելու նրա «Նահապետ Քուչակի դիվանը» աշխատությունը: Հանգամանքների բերումով պայմանավորվածությունը չի իրականանում:

Նախաբան

XX դարի Հայ իրականության երևելի դեմքերից է արևմտահայ խոշորագույն գրական-հասարակական, քաղաքական գործիչ Արշակ Չոպանյանը (1872–1954 թթ.): Նա Հայ գրականության «մեծ դեսպանն էր» (Տ. Կամսարականի բնութագրմամբ) Եվրոպայում:

1898 թ. նոյեմբերին Ա. Չոպանյանը Փարիզում սկսում է մեծադիր էջերով հրատարակել գրական, գեղարվեստական, գիտական ու քաղաքական «Անահիտ» հանդեսը: Այստեղ նա տպագրեց բազմաթիվ քննական հոգվածներ Հայ

* Ներկայացվել է 23. IX. 2025 թ., գրախոսվել է 21. X. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

գրականություն, մշակութի, արվեստի վերաբերյալ, գրեց ուսումնասիրություններ Հայ գրողների մասին, ընդարձակ հոդվածներով Հայ ընթերցողներին ներկայացրեց եվրոպական ու արևելյան գրականության մեծ վարպետներին ու հրատարակեց նրանց գործերի թարգմանությունները: Հայ գրականության ու մշակութի անվանի դեմքերը աշխատակցեցին «Անահիտ»-ին՝ գրական, պատմական, լեզվագիտական, ճարտարապետական, երաժշտական և այլ ուսումնասիրություններով:

«Անահիտ» հանդեսում և «Ապագա» շաբաթաթերթում տպագրված բազմաթիվ գրախոսություններում, հոդվածներում ու առանձին անդրադարձների մեջ Չոպանյանը Չարենցին գնահատել է որպես ազգային և համաեվրոպական նշանակության բանաստեղծ, ով բերում էր իրականության գեղարվեստական նոր ընկալում, պատկերային նոր մտածողություն, նոր լեզու և տաղաչափություն:

Չարենցի գործերին նվիրված Չոպանյանի հոդվածներն իրենց նշանակություն ունեցան ոչ միայն Սփյուռքում, այլև Հայրենիքում, քանի որ այդ տարիներին շատ էին ինչպես բանաստեղծին ընդունողները, այնպես և մերժողները: Սփյուռքում նրան մերժում էին որպես բոլշևիկ բանաստեղծի, Հայրենիքում էլ պրոլետարական սխեմատիզմով կաշկանդված գրողները նրան համարում էին ժամանակավրեպ, անգամ մի քար ընկած խորհրդային գրականության ճանապարհին: Այս ամենին հակառակ՝ Չոպանյանը որպես խորաթափանց գեղագետ, Չարենցի ստեղծագործությունը գնահատեց Հայ և համաշխարհային պոեզիայի անցած ճանապարհի ավանդույթներով, գնահատեց նրա նորարարությունն ու կանխատեսեց գրական փառքը:

1932 թ. նոյեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության առիթով մեկ ամիս լինելով Երևանում՝ Չոպանյանը հանդիպել է Չարենցին և միասին քննարկել են Հայ ժողովրդի ու Հայ գրականության հետ կապված բազմաթիվ հարցեր:

Որպես սկիզբ՝ նամականի

Ա. Չոպանյանի ամենատես, ամենահաս հայացքը նկատեց Ե. Չարենցին, և սփյուռքահայ իրականության մեջ նա առաջինն էր, որ բանաստեղծին գնահատեց ըստ արժանվույն: Պահպանված գրական վավերագրերի սկիզբը հայագետի¹ և Պողոս Մակինցյանի (1884–1938 թթ.) աշխույժ նամակագրությունն է հատկապես 1922–1924 թթ.²:

Այդ տարիներին «Անահիտ» ամսագրում Ա. Չոպանյանը ծավալում էր եռանդուն գրական-մշակութային, ընդհանուր առմամբ՝ հայագիտական լայն գործունեություն, իսկ Պ. Մակինցյանը ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմի ավտուր թողել և ստանձնել էր Անդրդաշնության արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատի Կ. Պոլսի ներկայացուցչի պարտականությունը և շարունակում էր գրաքննադատական ու թարգմանական գործունեությունը: Մակինցյանը հատկապես աչքի ընկավ Ե. Չարենցի և մյուսների «Երեքի» դեկլարացիայի օրերին տպագրած «Հայկական Բուլալոն և նրա արբանյակները թվով երեք ու կես (գրական ֆելիետոն)»³ հոդվածով և մի սրամիտ ելույթով⁴:

¹ Պ. Մակինցյանին հասցեագրված «1923, ապրիլ 11, Փարիզ» նամակը տե՛ս Չոպանյան. 1980, 149–150:

² Տե՛ս Չոպանյան. 1981, № 3, 93–96:

³ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16. VII. 1922:

⁴ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 22. VII. 1922:

Պահպանված նամակներից առաջինը՝ Կ. Պոլսից «2. 08. 1922» թվագրությամբ ուղևորված, Չոպանյանին հասցեագրված Մակինցյանի նամակն է, որի մեջ հայտնում է, որ ստացել է հուլիսի 24-ի և 26-ի թվագրությամբ նրա նամակներն ու Մոսկվայում Չարենցի տպագրած «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը (տպագրվել է 1922 թ. մարտ – մայիս ամիսներին)։ Տեղեկացնում է նաև, որ Կ. Պոլսում ուզում է հրատարակել Չարենցի ընտիր երկերի ժողովածու⁵, որից հետո երկհատորյակը կուղարկի իրեն։ Ապա հավելում է, որ շուտով կտպագրվեն Վահան Տերյանի «Երկերի ժողովածու»-ի 2-րդ և 3-րդ հատորները, որոնք ևս կուղարկի նրան։

Մակինցյանի հաջորդ նամակը վերստին ուղարկված է Կ. Պոլսից և թվագրված է «4. 10. 1923»։ Տեղեկացնում է, որ ստացել է Չոպանյանի վերջին երկու նամակները և ուղարկում է Տերյանի «Երկերի ժողովածու»-ի 2-րդ և 3-րդ հատորները, «... շուտով կուղարկեմ Չարենցի գիրքը և Տերյանի I հատորը»⁶։ Մակինցյանի 3-րդ նամակը թվագրված է «14. II. 1924», ուղարկված է Կ. Պոլսից և վերաբերում է Վ. Տերյանին։

Չոպանյանի պատասխան նամակներից պահպանվել է միայն մեկը՝ թվագրված և տեղագրված «1923, ապրիլ 11, Փարիզ»։ Հայտնում է, որ ստացել է «Նորք»-ի առաջին գիրքը. «... Հայաստանի մեջ ազգային մտավոր ներուժի կյանքի մը վերանորոգման սրտապնդիչ ապացույցը կուտա և ուր ինքնատիպ հայ տաղանդի մը՝ Եղիշե Չարենցի հայտնությունը կբերե»⁷։ Հաջորդում են հայրենանպաստ այլևայլ մտահոգություններ և առաջարկություններ։ Այսպես, նա իր խոր մտահոգությունն է հայտնում Եղեռնից հետո Արևմտյան Հայաստանում եղած հայկական հիշատակները, մասնավորապես ճարտարապետական կոթողները թուրքերի կողմից ավերելու իրողության կապակցությամբ։ Հայտնում է, որ այդ հարցով Շենոկայի համաժողովի ժամանակ ԽՍՀՄ դեսպանի միջոցով նամակ է հասցեագրել պարոն Բեկզադյանին՝ Անիի ավերակները, Վանի, Աղթամարի, Մուշի հայկական հուշարձանները թուրքերի կողմից քանդելու վտանգը կանխելու համար։ Հավելում է, որ եթե այդ ամենը ստույգ է, ապա Հայաստանի կառավարությունը պետք է դիմի Քեմալի կառավարությանը, որ այդ վանդալիզմին վերջ տրվի։

1923 թ. ապրիլի 13-ին Պ. Մակինցյանին գրած նամակում Ա. Չոպանյանը հայտնում է, որ ձգտում է «գաղութահայությունը դարձնել դեպի Հայաստան»⁸։

⁵ Տե՛ս Չ ա ր Ե ն ց. 1923:

⁶ Չ ա ք ա ր յ ա ն. 1981, № 3, 94: Վ. Տերյանի «Երկերի ժողովածու»-ի II և III հատորները լույս են տեսել 1923-ին, իսկ I հատորը՝ 1924-ին՝ Կ. Պոլսում։ IV հատորը լույս տեսավ Երևանում 1925-ին։ Նախատեսված V հատորը չտպագրվեց՝ ավիավթարից Ա. Մյասնիկյանի անակնկալ վախճանի պատճառով, ով ինչպես Տերյանի, այնպես էլ Չարենցի հատորների հրատարակման նախաձեռնողն ու կազմակերպիչն էր։

⁷ Չ ո պ ա ն յ ա ն. 1980, 149–150: «Նորք»-ի I գրքում (1922 թ.) տպագրվել են Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի առաջին մասը և «Աչնան քամին» բանաստեղծությունը։

⁸ Դ ա լ լ ա ք յ ա ն. 1987, 367:

Չարենցը Չոպանյանի տեսադաշտում

Իրեն բնորոշ անմիջական արձագանքով Ա. Չոպանյանը «Ապագա» շաբաթաթերթում տպագրում է «Հուսադրիչ երևույթներ» գրախոսությունը՝ նվիրված «Նորք»-ի I գրքին (յույս է տեսել 1922 թ. նոյեմբեր–դեկտեմբերին)։ «Երկիր Նայիրի» վեպի և «Աշնան քամին» բանաստեղծության օրինակով ազդարարում է «... Հայտնությունը Հայ նոր ու ինքնատիպ բանաստեղծի մը՝ Եղիշե Չարենցի ...»⁹։ «Աշնան քամին», ըստ նրա, գրված է «Վերհարնյան շունչով», վեպի հատվածը՝ «արտասովոր կենդանությունամբ, քմայքով ու զորությունամբ լեցուն <...> Հայների արժանի քնարական սրամտությամբ»։ «Չարենցի երևումը, իբր նոր աստղ Հայոց գրական երկինքին մեջ <...> առաջ եկած՝ մեր ազգին վրա խուժող, խեղդիչ, սպառիչ, քանդիչ արհավիրքներն հետո»¹⁰։ Չարենցին նաև համարում է «մեր ցեղին անկորուստ կենսունակության և քաղաքակրթական բարձր արժեքին վրա մեր հավատքը խորապես զորացնող»¹¹ ամենամխիթաբական իրողություններից մեկը։

Կարճ ժամանակ անց Չոպանյանը նույն շաբաթաթերթում տպագրում է «Եղիշե Չարենց» երկմասանոց ծավալուն հոդվածը։ Նրա ձեռքին էին Մակինցյանի ուղարկած Չարենցի «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը (Մոսկվա, 1922 թ.) և «Պոեմներ» (Կ. Պոլիս, 1923 թ.) գիրքը. «... Չարենցի արտադրած բոլոր բանաստեղծությունները պարունակող երկու ստվար հատորները <...> իմ մեջս վերջնապես ամրացուց այն համոզումը, թե Չարենց Հայոց մեծագույն բանաստեղծներն է մին է, ու մին ամենեն ինքնատիպ ու բազմազան բանաստեղծներն, որ որևէ ազգի մեջ երևան եկած ըլլան»¹²։ «Չարենց անհավասար է, իր ձևը միշտ չունի Տերյանի արտահայտական անթերի գեղեցկությունը, բայց իր քերթողական անձնավորությունը ավելի գորեղ, ավելի ընդարձակ ու բազմաձև է, քան Տերյանինը։ <...>։ Չարենց այդ «ապացույց»-ներուն [ժողովրդի ուժեղ ու կորույթի ոգու] շքեղագույններն է, և ինչ որ ամենեն ավելի հատկանշական է իր գործին մեջ, հոն տիրող առողջ, կորույթի, լավատես, հավատավոր ոգին է, այնքան տարբեր Հայոց դարավոր գրականության մեջ հաճախ հայտնվող եղերերգական մեկամղձիկ կամ վհատ հոգեբանությունն. Չարենց Հայ հանճարի նոր հաստատում մըն է, ու նույն ատեն բարեգուշակ նշան մը Հայ ցեղի հոգեկան զորացման»¹³։

«Ես իմ անուշ Հայաստանի ...»-ն Չոպանյանը համարում է «մեծ տաղանդով լեցուն, անկորուստ մնայու սահմանված», «... Հայաստանը երգող հոյակապ տաղը, որ Հայ բանաստեղծության ծաղկաբաղներուն հավիտենական զարդերն է մին պիտի ըլլա»¹⁴։

Չոպանյանը կրկնում է նախկինում ասածը. Չարենցը «Հայների մը քնարական սրամտությունը կը միացնե Վերհարնի մը դյուցազներգական ամեհի ավյունին», նկատում է բանաստեղծի «խառնվածքի հազվագյուտ» բարդությունը, «անձնական խառնվածքին որոշ ուժեղ կնիքը» տերյանական «երգուն զմայլելի փափկություն» ունեցող արվեստի ազդեցությունների վրա¹⁵։

⁹ «Ապագա» (Փարիզ), 21. IV. 1923:

¹⁰ «Ապագա», 21. IV. 1923:

¹¹ «Ապագա», 21. IV. 1923:

¹² «Ապագա», 01. III. 1924:

¹³ «Ապագա», 08. III. 1924:

¹⁴ «Ապագա», 01. III. 1924:

¹⁵ «Ապագա», 01. III. 1924:

Պոեմների կապակցությամբ էլ Չոպանյանն արձանագրում է. «Այդ քերթ-վածներու խումբին մեջ վերականգնացած կը գտնենք, բոլորովին ուրիշ շեշտով և տարողությամբ, բայց նույնքան լայն ու հզոր շունչը, որ Նարեկացիին, Աբովյանին և Ալիշանին գործը կ'ուռնեցնե. դյուցազներգական թուիչը Սիամանթոյին, Վարուժանին և Թումանյանին, որոնց վաղաժամ խորտակումը կ'ողբանք, այդ էջերուն մեջ նորափետուր կը թևաբախե, ուրիշ խոսքերով, ուրիշ պատկերներով, արտահայտում բոլորովին տարբեր, նոր շրջանի մը, բայց որակով և գործությամբ նույն»¹⁶:

Ուշագրավ է, որ Չարենցի բանաստեղծական ծննդաբանությունն առնչում է ոչ միայն Տերյանին, այլև Աբովյանին ու Թումանյանին և նորից գնահատում. «... բարձր մշակույթի բանաստեղծ մըն է. արվեստագետ քերթող մը, որ իր ամենն արտառուց թվող նորաստեղծությունց մեջ իսկ՝ գիտակից և հաշվված գեղեցկություն մը կ'իրականացնե», Չարենցին համարում է «... մեր ազգային քերթության ամենն թանկագին դեմքերեն մին»¹⁷: Չոպանյանը բանաստեղծի անվան հետ է կապում հայոց ազգի վերածնությունը. «... մեր Ցեղին համար՝ հայրենի հողին վրա՝ արդեն կ'ընծայե ներկա մը իրական վերածնություն: <...> ծյուրած, արյունաքամ, սպառած ժողովուրդն մը այդպիսի բանաստեղծ մը չեղբեր. մեր ժողովուրդը, թիվով նվազած, հոգվով ավելի քան երբեք ուժեղ է ու բեղուն, ատոր բազմապատիկ ապացույցները կուտա»¹⁸:

Միանգամայն իրավացի է էդ. Զրբաշյանը, ըստ որի՝ Ա. Չոպանյանի այս հոդվածը Ե. Չարենցի մասին «գրված առաջին և լավագույն գնահատականներից մեկն է»¹⁹:

Անվարան կարելի է ասել, որ «... բանաստեղծը տեղյակ էր, և, թերևս, տող առ տող անգիր գիտեր իր ստեղծագործության Չոպանյանի հեղինակավոր գնահատություններից հատվածներ»²⁰:

Ի դեպ, Հովհաննես Պողոսյանի «Աթենք, 6 հունվար, 1925» տարեթվով Չոպանյանին հղած նամակից պարզվում է, որ Չարենցը ներկա է եղել Չոպանյանի պատվին Աթենքում հունվարի 4-ին, ահա՛ այս հայտագրով կայացած հանդեսին. «Հայտագիր Արշակ Չոպանյանի հոբելյանական հանդեսին: Տեղի պիտի ունենա «Օտենոն»-ի սրահին մեջ 4 հունվարի, կիրակի, կեսօրն վերջ ժամը 3-ին»²¹:

Բացակա ներկայություն

Այնտեղ, ուր Չոպանյանն էր՝ հայտնվում էր նաև Չարենցը. 1925 թ. մարտի 31-ին իր արտասահմանյան շրջագայության շրջանակներում Չարենցը Վենետիկից ժամանում է Փարիզ: Նույն օրը Փարիզում մասնակցում է միջոցառման: «Ապագա» թերթը «Ժամանում» տեղեկատվությամբ ուշացումով հայտնում է. «Բանաստեղծ Եղիշե Չարենց Բարիզ հասած է»²²:

¹⁶ «Ապագա», 01. III. 1924:

¹⁷ «Ապագա», 08. III. 1924:

¹⁸ «Ապագա», 08. III. 1924:

¹⁹ Զրբաշյան. 1977, № 3, 135:

²⁰ Զաքարյան. 2003, 332:

²¹ Զաքարյան. 2003, 342–343:

²² «Ապագա», 04. IV. 1925:

Փարիզում ապրող Չարենցի քրոջ տղայի՝ Տիգրան Հակոբյանի հուշերից. «Չարենցը մեզ գտավ Փարիզում: Փարիզի մեջ Ռյու Կուսաժ հյուրանոց կար: Պանթոնի մոտ: Այնտեղ էր ապրում Չարենցը: ՀՕԿ-ի ընկերությունն պետք է կազմեր: Անպիտան հայերը թշնամացան: Քեռուս ուղեցին սպանել: Ահաբեկեցին նրան»²³:

Փարիզում էին Շիրվանզադեն, Ջապել Եսայանը, Կոստան Ջարյանը, Համլիկ Թումանյանը, Երվանդ Քոչարը ... Չարենցը Փարիզում Չոպանյանին, ինչպես նաև այլ հայ գրական մարդկանց՝ Շիրվանզադեին ու Եսայանին չի հանդիպել, համենայն դեպս վկայություններ չկան: Մինչդեռ այդ հանդիպումները կարողարեին նրա փարիզյան օրերը: Չոպանյանը «Ապագա» թերթի տեղեկատվությունից թերևս տեղյակ լիներ, որ Չարենցը Փարիզում է, և նրանք պետք է որ անպայման հանդիպեին, բայց գրավոր արձագանքներ չկան ...

Այդ տարիներին ուսանող-բժիշկ, գրասեր Ահարոն Խաչատրյանի հուշերից հայտնի է, որ Ե. Չարենցը Հոռմից Փարիզ պետք է մեկներ «... Ֆրանսական վիզայի մասնավոր արտոնություն մը շնորհիվ Արշակ Չոպանյանեն»²⁴, սակայն բանաստեղծը դժգոհություն էր հայտնում, որ «Փարիզեն կ'ուշանար Ֆրանսական վիզան, զոր Չոպանյան խոստացած էր ապահովել ...»²⁵: «... կյանքով ըստ ամենայնի դժբախտ բանաստեղծին այդպես էլ բախտ չվիճակվեց Փարիզում հանդիպել իր վաստակի հիմնավոր գնահատողներից Արշակ Չոպանյանին: Հայտնի և անհայտ հանգամանքների բերումով գտնվում էր Անգլիայում»²⁶, – գրում է Ալ. Զաքարյանը:

Գնահատում

1930 թ. ապրիլին «Անահիտ» հանդեսի 4-րդ համարում բարձր գնահատանքով Չոպանյանը հայտնում-տեղեկացնում է Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուի հրատարակության մասին, խոստանում վերլուծականով անդրադառնալ: Խոստումը մնում է, սակայն մի քանի բնութագրական տող հասցնում է արձանագրել. «... ըսեմ միայն, որ Չարենց իր այդ վերջին հատորին մեջ ունի քերթվածներ, որ իր և հայ բանաստեղծության ամենեն բարձր արտադրություններն են – ձևով ավելի կատարյալ, հասուն, հավասարակշիռ քան ինչ որ արտադրած է ցարդ, նույնքան ուժեղ մտածում և ջերմ զգացում պարունակելով հանդերձ որքան իր նախորդ լավագույն քերթվածները ...»²⁷: Ա. Չոպանյանը միջանկյալ ավելացնում է. «... հիմար մըն է «Հուսաբեր»-ի խմբագիրը, որ այս օրերս իսկ կը գրեն «Եղիշե Չարենց ասուպի նման փայլեցավ ու ասուպի նման ալ ընդմիջտ չքացավ»²⁸:

Ի դեպ, Չարենցի «... մնայուն արժեքով ու մշտական շահեկանություններ կայացնող» «Էպիքական լուսաբաց»-ին Չոպանյանը հպանցիկ անդրադարձել է նաև «Անահիտ» հանդեսի 1931 թ. թիվ 5–6-ում²⁹:

²³ Չարենցի հետ: Հուշեր. 1997, 57: Չարենցի արտասահմանյան ուղևորության, մասնավորապես Փարիզում եղած օրերի մասին տե՛ս նաև՝ Գ ա ս պ ա Ր յ ա ն. 2022, 284–286:

²⁴ Զ ա ք ա Ր յ ա ն. 2003, 389:

²⁵ Զ ա ք ա Ր յ ա ն. 2003, 392:

²⁶ Զ ա ք ա Ր յ ա ն. 2008, 118:

²⁷ «Անահիտ», 1930, թիվ 4, 122:

²⁸ «Անահիտ», 1930, թիվ 4, 122:

²⁹ «Անահիտ», 1931, թիվ 5–6, 186:

Ե. Չարենցի «Երկեր»-ի ստվար հատորի մասին Ա. Չոպանյանի կողմից անդրադարձներ կան «Անահիտ»-ի 1933 թ. համարներում³⁰: ««Պետհրատոր» լույս ընծայած է դարձյալ այս վերջերս Եղիշե Չարենցի «Երկեր»-ը, մեծագիր ստվար չքեղատիպ հատոր մը ուր Հայուլթյան ներկա պատմական ընթացի մեծ բանաստեղծին ոտանավոր ու արձակ գրվածքներն շատերը ամփոփված են (բայց ո՛չ թուր անկորուստ էջերը, որոնցմե ոմանք կպակսին հոն) ...»³¹, – գրում է Ա. Չոպանյանը:

Նկատելիք նաև, որ Ա. Չոպանյանը «Անահիտ»-ի «Քրոնիկ» բաժնում հիշատակի խոսքով ներկայացնելով Սպիրիդոն Մելիքյանին գրում է. «... Ան կշարունակեր նաև շարադրել երգեր. ու նոր շրջանի բանաստեղծներու – Չարենցի և այլոց – գործերուն վրա հորինած է գեղեցիկ եղանակներ, որ հաճույքով կերգվեին ամեն տեղ»³²:

... Անհրաժեշտ է ասել, որ Չոպանյանի բարոյական ազդակը նաև նպաստեց խորհրդային հայ գրողների շրջադարձին դեպի արևմտահայ արձակն ու պոեզիան. Չարենցի, Մահարու համար Դուրյանն ու Մեծարենցն էին, Սիամանթոն ու Վարուժանը, Բակունցի համար Համաստեղն էր: Ահա այդ նպատակով 1930 թ. նոյեմբերին Չարենցի խմբագրությամբ «Պետհրատոր» երևանում լույս է ընծայում «Արևմտահայ բանաստեղծներ (ժողովածու ընտիր բանաստեղծությունների)» վերնագրով գիրքը: Բանաստեղծական այս ընտրանին կոչված էր նորոգելու արևմտահայ քնարերգության ավանդույթները և դրանք ներմուծելու գեղարվեստական նոր որոնումների համակարգի մեջ: «Կազմողների կողմից» խոսքում ասվում է. «... մեր նոր, պրոլետարական կուլտուրան և գրականությունը կերտելիս մենք չպետք է մոռացուլթյան մատնենք անցյալի արժեքները, չպետք է հրաժարվենք նրանցից հնարավորը վերցնելու և դիպկոտիկական վերամշակման միջոցով հարստացնելու մեր նոր պրոլետարական գրականությունն ու կուլտուրան:

Անցյալի կուլտուրական արժեքների օգտագործմանը մոտենալիս պետք է դիպկոտիկական մատերիալիզմի գենքերով և մեծ զգուշությամբ կատարել այդ բարդ պրոցեսը՝ առանց տուրք տալու մեխանիկական «օգտագործմանը», որը հաճախ է կատարվում մեղանում:

Անտարակույս մեզանում կլինեն մարդիկ, որոնք կասկածավոր նախապաշարումներով տարված, կցանկանան արևմտահայ պոեզիայի հրատարակումը դիտել որպես «նահանջ» պրոլետարական դիրքերից, սակայն մենք այդպիսիներին դարձյալ կհիշեցնենք հանճարեղ առաջնորդի վերոհիշյալ մտքերը ... [իսկ «հանճարեղ առաջնորդը» Ստալինը, խորհուրդ էր տալիս յուրացնել անցյալի մշակութային ժառանգությունը]:

Սակայն անհրաժեշտ է մատնանշել, որ այդ, այսինքն արևմտահայ գրականության օգտագործմանը պետք է մոտենալ ավելի զգուշ և վերապահորեն»³³: Քանի որ, ըստ կազմողների, Սիամանթոյի ստեղծագործությունները «հագեցված են շովինիստական կրքահույզ տրամադրությամբ»: Վանանդեցին իր հերթին Սիամանթոյի պոեզիան համարում է այդ շրջանի «ամենամոռյալ էջը», իսկ

³⁰ «Անահիտ», 1933, թիվ 1, 66, թիվ 3–6, 212:

³¹ «Անահիտ», 1933, թիվ 3–6, 212:

³² «Անահիտ», 1933, թիվ 1, 58:

³³ Գ ա ս պ ա Ր յ ա ն. 2022, 433–434:

Վարուժանը նրա պատկերացմամբ «Դաշնակցության անփառունակ սիրազոր-
ծուխյունների օրհներգու է, հայ ցեղային պաշտամունքի քուրմ»³⁴: Նկատենք,
որ ժողովածուում ընդգրկված է 26 հեղինակ այդ թվում նաև Արշակ Չոպան-
յանը:

Չոպանյանը ուսմկավար էր: Ռամկավար էր նաև Վահան Թեքեյանը, ով
դեռևս 1919-ի հոկտեմբերին Երևանում մասնակցել էր Չարենցին նվիրված
Նիկոլ Աղբալյանի հայտնի զեկուցմանը: Ահա նա Չարենցի նոր գրքի հանդեպ
հետաքրքրություն է ներկայացնում և տպագրում է «Քաղաքացի-բանաստեղծ
Չարենց» հոդվածը՝ նվիրված «Էպիքական լուսաբաց»-ին: «Չարենց բանաս-
տեղծը հիմնադրի և համակրելի է հիմա»³⁵, – հայտարարում է նա և արտատպում
«Ներքող առ քննադատ №» գործը: Չարենցի այդ գիրքը հեղինակային
մակագրությամբ հասել է Թեքեյանին և ոգևորել նրան³⁶:

Ի դեպ, Չարենցի հանդեպ ուսմկավարների դրսևորած այս ընդունող-գնա-
հատող վերաբերմունքի տեսադաշտում դարձյալ անհամոզիչ է «Հայրենիք»-
ում «Գրական ուղիների վրա (ամսական տեսություն)» խորագրի տակ Դարեհ
Ազատյան ստորագրությամբ տպագրված «Եղիշե Չարենց. «Էպիքական լու-
սաբաց»» վերնագրով հոդվածը. «Կը թվի, թե այս աղմկարար բանաստեղծը
ըսած է իր վերջին խոսքը: Ու քիչ բան ունի ավելցնելիք իր գրական վաստակին
վրա: Ու համբավին»³⁷: Ի դեպ, հոդվածում հեղինակն անդրադարձել է Չարենցի
այս գործի առթիվ «Արտասահմանի պաշտոնական քննադատի»՝ Չոպանյանի
գնահատանքին: Բերվում են Ա. Չոպանյանի գրած հետևյալ տողերը. ««Չարենց
իր այդ վերջին հատորի մեջ, «Էպիքական Լուսաբաց», ունի քերթվածներ, որ իր
և հայ բանաստեղծության ամենեն բարձր արտադրություններն են – ձևով
ավելի կատարյալ, հասուն, հավասարակշիռ, քան ինչ-որ արտադրած է ցարդ,
նույնքան ուժեղ մտածում և ջերմ զգացում պարունակելով հանդերձ, որքան իր
նախորդ լավագույն քերթվածները» (կ'արտագրեմ իր բառերով. ճաշակե-
ցեք)»³⁸:

... Ա. Չոպանյանը շարունակում էր ուշի ուշով հետևել Հայաստանի գրա-
կան կյանքին և «Անահիտ» հանդեսում անդրադառնում է Ե. Չարենցին,
տպագրում նրա գործերից: 1927 թ. դեկտեմբերից ի վեր Երևանում հրատա-
րակվող «Նոր ուղի» «ստվար ու ճոխ» ամսագրի թիվ 9–10-ի մասին,
մասնավորապես, գրում է. «... Բանաստեղծության բաժինը թույլ է, ու գեթ առ
այժմ՝ շատ սահմանափակ տեղ կբռնե հոն. մերթ բռնազբոսիկ է և միօրինակ.
բայց և կան հոն Չարենցի և Նորենցի էջերեն ումանք որ գեղեցիկ են ...»³⁹:
«Գրական դիրքերում» ամսագրի մասին էլ գրում է. «Գրական դիրքերում են
կ'իմանանք թե Եղիշե Չարենց, որ բավական ատեն ի վեր քիչ բան կհրատարա-
կեր, բանաստեղծությանց նոր հատոր մը ի լույս ընծայեր է, «Էպիքական լու-
սաբաց», գոր կմաղթենք կարենալ տեսնել ի մոտո»⁴⁰:

³⁴ Գ ա ս ա լ ա Ր յ ա ն. 2022, X, XL, XLIII:

³⁵ «Արև» (Կահիրե), 20. VI. 1931:

³⁶ Տե՛ս Ժ ա մ կ ո չ յ ա ն. 1952, թիվ 1–2, 43–51, Ղ ա գ ա Ր յ ա ն. 1983, թիվ 4, 52–54:

³⁷ «Հայրենիք» (Բոստոն), 1931, թիվ 7, 96–97:

³⁸ «Հայրենիք», 1931, թիվ 7, 95–96:

³⁹ «Անահիտ», 1930, թիվ 5, 107:

⁴⁰ «Անահիտ», 1930, թիվ 5, 111:

Անճնական հանդիպում

Չոպանյան – Չարենց հանդիպումն սպասում էր իր ժամանակին. 1932 թ. նոյեմբերի 28-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրություն կապակցությամբ Հայաստան ժամանած Չոպանյանը այցելում է Չարենցին: Ժամանել էր նոյեմբերի 12-ին՝ որպես Լիոն քաղաքի Ազգային գավառական խորհրդի կողմից ընտրված պատգամավոր: Մնում է մեկ ամիս, ապրում է ՀՕԿ-ի շենքում բանաստեղծ Վահան Միրաքյանի տանը:

Չարենցի հետ հանդիպման ժամանակ Չոպանյանը հայտարարում է, որ ինքն ընդունում է հեղափոխությունը: Խոսում են հայրենիքում հայ ժողովրդի համախմբման մասին: Չոպանյանն ասում է՝ քանի որ առայժմ դրսի հայրենիքն ընդունել չեք կարող, ընդունեք փոքր խմբերով. թող գան, տեսնեն, վերադառնան: Ապա անցել են գրականությանը՝ էյլուար, Ապոլիններ, Կիպլինգ, Մայակովսկի ...⁴¹

Չոպանյանը Չարենցի հետ շփվում է որպես նրա ստեղծագործությանը քաջատեղյակ գրական ղեմք: Չարենցի հետ հանդիպմանը ներկա է եղել նաև Գարեգին Բեսը, ով հետագայում պատմել է հետևյալը. Չոպանյանը Չարենցից խնդրել է 1932 թ. տարեկազմին լույս տեսած նրա «Երկեր»-ի հրեկյանական հրատարակությունը: Վերջինս մերժել է՝ պատճառաբանելով, թե տանը չկա, մինչդեռ գրքի օրինակները չարված են եղել գրադարակում Չոպանյանի աչքի առաջ, իսկ Չարենցը մեջքով է նստած եղել: Հետո իր արարքի համար Չարենցը զղջացել է, մանավանդ որ Չոպանյանը տեսել է գրքերը, և սխալվելով տվել քաղաքական մեկնաբանություն. «Հ, ի՞նչ անեմ, ինչպե՞ս նվիրեի գիրքս Արշակ Չոպանյանին: Չգիտե՞ս, թե դա ինչ հետևանքներ կարող էր ունենալ: Կամ ի՞նչ մակագրերի վրան: Չե՞ս տեսնում, թե նրա մասին մամուլում ինչեր են գրում»⁴²:

Հայաստանի խորհրդայնացման օրը՝ 1932 թ. նոյեմբերի 29-ին, «Պետհրատ»-ի վարիչ Էդվարդ Չոփուրյանի աշխատասենյակում Չարենցի մասնակցությամբ Չոպանյանի հետ պայմանագիր է ստորագրվում նրա «Նահապետ Քուչակի դիվանը» գիրքը վերահրատարակելու վերաբերյալ: Անշուշտ, Չարենցի նախաձեռնությունն էր՝ Ա. Խանջյանի իմացությամբ: Վճարվում է հոնորար, բայց Չարենցի և Չոպանյանի դաշինքը չի իրականանում⁴³:

1933-ին «Անահիտ»-ում և «Ապագա»-ում տպագրած հայաստանյան ծավալուն տպավորություններում Չոպանյանը հիշում է նաև Չարենցին: Այսպես, «Անահիտ» հանդեսում տպագրած «Տպավորություններ ու հիշատակներ Խորհրդային Հայաստանեն» բովանդակալից հոդվածում գրում է. «Գրագետներեն ու բանաստեղծներեն կհիշեմ այցելությունները զոր տվի բանաստեղծ Չարենցին՝ որուն հետ մեկի ավելի անգամներ տեսակցեցա՝ գրական հարցերու վրա երկար խոսակցություններ ունենալով, և որուն բնակարանին մեջ (Նոր Հյուրանոցի սենյակ մը) ճանչցա նաև երիտասարդ ու շատ համակրելի ճարտարապետ մը, Պ. Մազմանյան, որ գրական հարցերով ալ հետաքրքրվող նուրբ միտք մըն է» և որպես Հայաստանի «մտավոր հորիզոնի ընդարձակման» վկայություն, Չոպանյանը հիշում է «Էպիքական լուսաբաց» ժողովածուն⁴⁴:

⁴¹ Զրբաշյան. 2007, 17:

⁴² Զրբաշյան. 2007, 17–18:

⁴³ Գասպարյան. 2022, 470:

⁴⁴ «Անահիտ», 1935, թիվ 6, 9:

Ա. Զոպանյանը, խոսելով Հայաստանում մտավորականության վիճակի մասին, հիշատակելով Ե. Զարենցին՝ գրում է. «Զարենցը մը հոն (Երևանում – Դ. Գ., Ա. Զ.) տարիներն ի վեր կգտնե այնպիսի աջակցություն, որպիսին ոչ մեկ հայ բանաստեղծ Կովկասի մեջ կամ այլուր՝ դեռ չէր գտած նոր ուեփմեն առաջ»⁴⁵:

Ի դեպ, «Անահիտ»-ի 1935 թ. № 1–2-ում «Ստացված գրքեր» խորագրի տակ նշված է նաև, որ ստացվել է՝ «Եղիշե Զարենց, ԳԻՐԲ ՃԱՆԱՊԱՐՀԻ, պոեմներ և բանաստեղծություններ: Նկարագրողությունը Հ. Կոջոյանի: Պետհրատ, Երևան, 1934: Գինը՝ 15 ռուբլի»⁴⁶:

Ա. Զոպանյանն իր բազմաթիվ դասախոսություններում ևս հիշել և առանձնացրել է «մեծանուն բանաստեղծ Ե. Զարենցի ամբողջական գործերը», վստահորեն նկատի ունի «Երկեր»-ի հոբելյանական հրատարակությունը: Այնպես որ, դժվար թե Զարենցը վերը նշված հանդիպումից հետո նվիրած չլիներ գիրքը, մանավանդ հանդիպման նոր առիթներ եղել են, թեև Զոպանյանը կարող էր նաև գրախանությունից ձեռք բերել:

Եզրակացություն

Ա. Զոպանյանի արտակարգ հարուստ պահպանում իր տեղն ունի Պ. Մակինցյանի հետ նամակագրությունը, որի մեջ այլևայլ հարցերի հետ արծարծվում է նաև Ե. Զարենցի ստեղծագործության գնահատության հարցը: Փարիզում Զոպանյանի խոսափողը հայերեն լույս տեսնող «Անահիտ» ամսագիրն էր (իր խմբագրությամբ) և «Ապագա» շաբաթաթերթը: Լինելով հայ և համաշխարհային գրականության լավագույն գիտակ՝ Զոպանյանն այս պարբերականներում հայ գրականության հին ու նոր արժեքները քննում և վերլուծում էր միմյանց այդ տեսանկյունից ու այդ չափանիշներով: Նման հայացքով նա գնահատեց նաև Ե. Զարենցի ստեղծագործությունը՝ պոեզիան և արձակը, նրա մեջ տեսնելով խորապես ազգային նկարագիր ունեցող համաշխարհային նշանակության գրողի: Ելակետը Զարենցի բարձր արվեստն էր՝ ազգային ակունքներով և համաշխարհային փորձով:

Դավիթ Գասպարյան – Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Զարենց: Հեղինակ է 80 գրքի և շուրջ 1300 հոդվածի: ORCID:0009-0004-7317-4535. grakanagetgasparyan@mail.ru

Անուշավան Զաքարյան – Բ. Գ. Դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավիուլոքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ախագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ուսա պատմագրական, մշակութային կապեր: Հեղինակ է 23 մենագրություն ու ժողովածուի, ախելի քան 250 հոդվածների և հրապարակումների: ORCID:0009-0008-4762-4124. patmhandes@rambler.ru

⁴⁵ «Անահիտ», 1934, թիվ 5–6, 59:

⁴⁶ «Անահիտ», 1935, թիվ 1–2, 108:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազատյան Դ. 1931, Եղիշե Չարենց. «Էպիքական լուսաբաց». – «Հայրենիք» (Բոստոն), թիվ 7, էջ 95–97:

«Անահիտ» (Փարիզ), 1930, թիվ 4, էջ 122, թիվ 5, էջ 107, էջ 111, 1931, թիվ 5–6, էջ 186, 1933, թիվ 1, էջ 58, 66, թիվ 3–6, էջ 212, 1934, թիվ 5–6, էջ 59, 1935, թիվ 1–2, էջ 108, թիվ 6, էջ 9:

«Ապագա» (Փարիզ), 21. IV. 1923, 01. III. 1924, 08. III. 1924, 04. IV. 1925:

«Արև» (Կահիրե), 20. VI. 1931:

Արևմտահայ բանաստեղծներ (ժողովածու ընտիր բանաստեղծությունների). 1930, կազմողներ՝ Ալազան և Վ. Նորենց, առաջաբանը՝ Գ. Վանանդեցո, Երևան, Պետհրատ, 434 էջ:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, «Տիգրան Մեծ», 803 էջ:

Դավաթյան Կ. 1987, Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, «Սովետական գրող», 480 էջ:

Ջաքարյան Ալ. 2003, Եղիշե Չարենց. կյանքը, գործը, ժամանակը, գիրք 2, Երևան, ՀԳՄ, 432 էջ:

Ջաքարյան Ալ. 2008, Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 3, Երևան, «Ֆենոմեն», 532 էջ:

Ջաքարյան Ան. 1981, Պ. Մակինցյանի նամակները Ա. Չոպանյանին. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 93–96:

Ժամկոչյան Հ. 1952, Հանդիպումներ Վ. Թեքեյանի հետ. – «Շիրակ» (Բեյրութ), թիվ 1–2, էջ 43–51:

Ղազարյան Վ. 1983, Վահան Թեքեյան և Եղիշե Չարենց. – «Շիրակ», թիվ 4, էջ 52–54:

Մակինցյան Պ. «Երեքը» գրական գրուպայի երկրորդ երեկոն. – «Խորհրդային Հայաստան», 22. VII. 1922:

Մակինցյան Պ. Հայկական Բուլվոն և նրա արբանյակները թվով երեք ու կես (գրական ֆելիետոն). – «Խորհրդային Հայաստան», 16. VII. 1922:

Չարենց Ե. 1923, Պոեմներ, խմբագրությամբ Պ. Մակինցյանի, Կ. Պոլիս, Պետական հրատարակչություն, 240 էջ:

Չարենցի հետ: Հուշեր. 1997, Կազմող և խմբագիր՝ Դ. Գասպարյան, Երևան, «Նաիրի», 423 էջ:

Չոպանյան Ա. 1980, Նամականի, Գ. Ազնավուրյանի աշխատասիրությամբ, Երևան, «Սովետական գրող», 504 էջ:

Ջրբաշյան Է. 1977, Արշակ Չոպանյանի հոդվածը Եղիշե Չարենցի մասին. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 135–142:

Ջրբաշյան Է. 2007, Դրվագներ իմ կյանքից, Երևան, «Զանգակ-97», 67 էջ:

ЕГИШЕ ЧАРЕНЦ В ОЦЕНКЕ АРШАКА ЧОПАНИЯ

ДАВИД ГАСПАРЯН, АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Ключевые слова: Чаренц, Чопанян, Макинцян, журнал «Анаит», еженедельник «Апага», Париж, письмо, статья, Ереван, оценка.

Аршак Чопанян (1872–1954) – писатель, литературовед, критик и издатель – являлся уникальной фигурой в армянской литературной жизни. Особо следует отметить его отношение к Е. Чаренцу (1897–1937) и его творчеству.

В своих многочисленных рецензиях и статьях, опубликованных в журнале «Анаит» и еженедельнике «Апага», Чопанян давал высокую оценку Чаренцу как поэту национального и общеевропейского значения, подчеркивая его поэтическое новаторство, нашедшее отражение в создании новаторских образов и форм. Согласно А. Чопаняну, его творчество характеризовалось новым художественным восприятием действительности. Статьи А. Чопаняна имели огромную значимость не только в Диаспоре, но и на родине, поскольку отношение к поэту и его творчеству было неоднозначным. Диаспора не принимала его, считая большевистским поэтом, а на родине его творчество подвергали критике в силу его тяготения к реалистической поэзии.

Давид Гаспарян – д. филол. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: история армянской литературы и культуры XX века, Е. Чаренц. Автор 80 книг и около 1300 статей. ORCID:0009-0004-7317-4535. grakanaget gasparyan@mail.ru

Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ, старший научный сотрудник отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы армянской действительности первой четверти XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 23 монографий и сборников, более 250 статей и публикаций. ORCID:0009-0008-4762-4124. patmhandes@rambler.ru

YEGHISHE CHARENTS IN ARSHAK CHOPANIAN'S ASSESSMENT

DAVID GASPARYAN, ANUSHAVAN ZAKARYAN

S u m m a r y

Keywords: Charents, Chobanyan, Makintsyan, “Anahit” journal, “Apaga” weekly, Paris, letter, article, Yerevan, assessment.

Arshak Chobanyan (1872–1954) – a writer, literary scholar, critic and a publisher – was a unique figure in the Armenian literary life. It is worth noting his respect for Charents (1897–1937) and his art.

In his numerous reviews and articles published in the journal “Anahit” and in the weekly “Apaga”, Chobanyan highly appreciated Charents as a poet of national and pan-European value emphasizing his poetic innovation, which was reflected in creating innovative characters and forms. According to A. Chobanyan, his art was

characterized by new artistic perception of reality. A. Chobanyan's articles had a great importance not only in the Diaspora but also in the motherland, whereas the attitude to the poet and his art was ambiguous. The Diaspora did not admit Charents considering him a bolshevik poet, while in the motherland, his art was criticized because of its bent to realistic poetry.

David Gasparyan – Doctor of Philological Sciences, Professor, Leading Researcher at the Department of New History of the Institute of History of NAS RA. Scientific interests: history of Armenian literature and culture of the XX century, Yeghishe Charents. Author of 80 books and about 1300 articles. ORCID:0009-0004-7317-4535. grakanagetgasparyan@mail.ru

Anushavan Zakaryan – Doctor of Philological Sciences, Editor-in-Chief of the "Historical and Philological Journal" of NAS RA, Senior Researcher at the Department of Art of the Armenian Diaspora and International Relations of the Institute of Arts of NAS RA. Scientific interests: issues of the Armenian reality in the first quarter of the XX century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical, literary and cultural ties. Author of 23 monographs and collections and over 250 articles and publications. ORCID:0009-0008-4762-4124. patmhandes@rambler.ru